ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
03 հունվարի 2024 թվականի N 04 - Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏԻ 2021 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՅԻՍԻ 21-Ի N 235-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տարածքային կառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 5-րդ հոդվածի 3-րդ մասով, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով, հիմք ընդունելով Լեռնաձորի հիմնական դպրոցի տնօրենի 2023 թվականի դեկտեմբերի 29-ի գրությունը և Լեռնաձորի հիմնական դպրոցի մանկավարժական խորհրդի 2023 թվականի դեկտեմբերի 25-ի թիվ 3 արձանագրությունը՝

ո ր ո շ ու մ ե մ.

Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզպետի 2021 թվականի մայիսի 21-ի «Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզպետարանի համակարգի «Հայաստանի Հանրապետության պետական ուսումնական հաստատություն» պետական ոչ առևտրային կազմակերպությունների կոլեգիալ կառավարման մարմինների՝ խորհուրդների անվանական կազմը հաստատելու և Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզպետի 2010 թվականի N 241-Ա որոշումը ուժը կորցրած ճանաչելու մասին» N 235-Ա որոշման N 23 հավելվածում «Աբգարյան Նելի» բառերը փոխարինել «Մովսիսյան Քրիստինա» բառերով:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ

Ռ.Ղուկասյան
Հաստատված է էլեկտրոնային ստորագրությամբ

2024 թ. հունվարի 3

ք. Կապան

Digitally signed by GHUKASYAN ROBERT 3712800290